

Կ. Պոլսէն Ս. Երուսաղէմ, ուր կը մնայ մինչև 1908, նոյն թուականին կը մեկնի, ի նպաստ Մշոյ հանգանակութեան համար և կ'ուղեորի Պոլիս և Եգիպտոս: Դարձեալ Առ. Մշոյ 1909ին. կը ձեռնադրուի եպս. 1909ին և կը վախճանի Մուշի մէջ 1915ին:

ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. ՈՒՌՀԱՅԵՑԻ.— Մր. 1666ին Եղիազար կթղի ժամանակ կը միաբանակցէր Ս. Յակոբի վանքին. յիշեալը ընկալադրի մը տակ ստորագրած է վկայելով որ Եղիազար վճարած է Աբրահամ Չէլէպիին տասն հազար երեսով ասլանլի զըշ. (Նաւակաւի, անտիպ):

ՆԵՐՍԷՍ ԵՐԷՅ.— Մր. Ս. Յակոբի վանքին մէջ ընդօրինակած է Գանձարան մը (անթուական). Յիշատակարանն է հետեւեալը. «Եւ արդ գրեցաւ սա ի սուրբ քաղաքիս Երուսաղէմ. ընդ հովանեաւ Յարութեանս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և Գողգոթայի. և Սուրբ Յակոբայ, և Յովնանու Առաքելոյն Քրիստոսի. և Սուրբ Սարգիս զօրաղարին. և Սուրբ Առաքելոցս և Հրեշտակապետացս. և Սուրբ Փրկչին. և Ս. Ծննդեանն. և Ս. Աստուածածնին. Սուրբ Հաւքարձանն. և Սուրբ Տեառնեղբօր. և Սուրբ Լեռնակողման և այլ ամենայն Տնօրինականացս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Ի կարողիկոսութեան Հայոց Տեառն Կարապետի. և յեպիսկոպոսութեան սուրբ փառափա Երուսաղիմաց Տէր Մեսրոպայ եւ Տէր Աբրահամին. և այլ ամենայն միաբանացս սուրբ Յակոբայ ամէն...: Յիշեցէք... զանարհեստ գրիչս զՆերսէս երէցս. և զծնողս իմ... Յեկար և զՄարայ...» (Նօսար. էջ 18—19): Յիշատակարանիս մէջ յիշուած երկու եպիսկոպոսներէն Աբրահամը պէտք է կանխէ Մեսրոպ եպս.ը վասն զի վերջինը միայն աթուակից էր 1454ին:

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԲԱՂԻՇԵՑԻ.— Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբ 1703ին. կը յիշուի Մինաս Ամգեցիին Օրագրութեան մէջ.

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԹՕԽԱՏՅԻ.— (Շուշակ). 1767ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը: ՓԿՆ. Յովակիմ վրդ. 1761ին հետեւեալ կերպով կը գրէ իր նամակին մէջ այս Թօխատցի վրդի նկատմամբ. «Կարապետ պտրք. (Դանձակեցին) լուսաւորեալ հոգին գրեալ էր մեզ վասն Ներսէս վրդի գըստերն թէ ծ. զըշ. տաս. մեք ի տեղս մինչ բճղ. զըշ. տալոց եւ զանք. բայց նա աստ և անդ ասէր թէ. քա՛հ հոգի. թէ որ հալս